

Ի ՆԱԻԱԿԱՏԻՍ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Պատմական Բանաստեղծութիւն՝ զոր կատարած է մեծանուն Հ. ՄԱՆՈՒԷԼ ԶԱԽԱՆԵԱՆ, Ս. Ղազարու մեծ մատենադարանի ղազլիճին մէջ, և ներկայութեան ամբողջ Մխիթարեան Միաբանութեան, Բարձրագոյն դպրոցներու հաստատութեան առթիւ, Մուրատեան Վարժարանի բացման նախօրեակին. 30 Յուլիս 1834.

«Արար ինձ մեծամեծս Հօրե...
արար զօրոշրիւն բազկու իւրով»

Ո՞րք այլ ումեք զիպողագոյն այսօր, ո՞ր Աստուածապատիւ Հայրապետ, և Արգոյ Հանդիսականք, ո՞ւմ այլ զիպողագոյն ըզձաձայնել զաստուծազդեցիկ նուագ ամենախոնարհ Դշխոյին ի մայրութիւն հրաւիրելոյն միածնին Հօր, քան թէ մերումս նուաստութեան նմին որդեգրեցելոցս. «Արար ինձ մեծամեծս Հօրե... արար զօրութիւն բազկաւ իւրով»: Եւ զիմիդ ո՞չ մեծ, ո՞չ մեծամեծ, Հարք սուրբք, կանգնել դպրոց, և դպրոց Հայկազանց, և ի հայրութիւն դպրոցին հրաւիրել զՄխիթարեանս՝ զխոնարհեալսն, զներքեւեալսն և զնշաւակեալսն տեղատարափ նետից: «Հայեցաւ ի խոնարհութիւն ծառայի իւրոյ»:

Ո՞վ օր բարենշան, օր անյայտ առ ի մէնջ, այլ յաւիտենից զրոշմեալ յաստեղս, և վաղ ուրեմն նշմարեալ ի կորովաբիր Նախահօրէն մերմէ, որ հոգւոյն ախամբ իբրեւ քաջացոյց զիտակաւ պատրաստեաց կանխագոյն զվարժոց առ ի հրահանգս հանդերձելոցն վարժապետաց: Օ՛ր անձկալի բնիկ ծերունեացս հանգուցելոց արդ ի գոգ Նախահօրն, զորոց պատուեմք առ մեօք զուկերաց նշխար յառտնին զամբարանս:

Օր՝ ուխտիւք նուիրական ի տարեգիրս ազգիս նորածնելոյ, օր ոչ նոցա վիճակեալ, այլ մեզ անագան որդւոցս, և այն՝ Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, առ կենդանութեամբ աստուածապատիւ Հայրապետիդ, որ հանդիսադիրն վերաբազմի այսօր, և Դիտապետ Դպրոցիս, վերաբազմեալ աստանօր ոչ տեսող ոք վարկպարազի, այլ քրտնաջան նախազրաւ գործադիր, զոր կոչել ախորժեմ և հայր և մայր, որոյ երկիցս նաւարկեալ

անվեհեր, յիշեմ տակաւին ընդ անհուն ասպարէզ բազմավտանգ յորձանաց՝ սատար եղեր գործոյս մեծի:

Շնորհ առ ի մէնջ ամենեցուն պարգեւեցի վերին խնամոցն, շնորհ և աստուածապատիւ Հօրդ՝ և առ ի մէնջ և ի համօրէն ազգէս, որոյ բարեբաստութեանն գտար ժիրաժիր առաջին գործունեայ, ընդ բազմավիշտ նշդհակցիդ և յետ այնորիկ ընդ ամս իրր երկոտասան տընեցար. և դեռ ի նոյն անկընելի ոգւով գլուխ ամբառնաս գեր ի վերոյ: Զի՞ է ինձ աստանօր ի համար բերել զմիոյ միոյ վաստակս զարգոյ ծերունեացն՝ զկենդանեացդ և ըզհանգուցելոցն զպատուական քիրտն ի դահլըճի խորհրդարանին, զոգետանջ երկունս ի բան և ի գիր. դարձեալ և զդատափետութիւն յատենէ յատեան, զի՛ զիպահոջ արգելան, զհակառակութիւնս, զպանդրութիւնս, յոր տակաւին հեծեն երկուք առ ի մէնջ, կացցեն ամենայնք ընդ խորին լուծեամբ, զի մի՛ զաւուրս ուրախութիւն տխրեցուցից տարաժամ:

Այո՛ առ ի մէնջ պակասեաց և ո՞չինչ ի մարդկայնոցս հնարից. բայց զամենայնի զյաջողութեան յայս գործ անակնկալ սքանչելիս համարիմք ամենազօր մատանց Բարձրելոյն. որպէս և զպահպանութիւնն խոստովանիմք առ ի նմանէ՝ և միշտ ուխտիւք խնդրելի: Բայց և Բարձրեալն պահանջէ յերախտաւորացս զտընութիւն երկայնամիտ և զջան անընկճելի՝ բայց և միաշունչ: Ահա զայսոսիկ կայ ինձ առաջի ստուերագրել աղօտ երանգօք ի դուզնաքեայ պատկեր բանախօսութեանս, ածեալ յայն ոչ ի հարկեցուցիչ միայն ակ-

նարկութենէ ամենապատիւ Հօրս, ոչ նորս ինչ հրաշարանել աստանօր արժանալուրս գիտողացդ առաջի, այլ յիշատակօք միայն համառօտիւք պնդել զանհրաժեշտ պարտիս, զոր յանձին կալաք, և ազդել խրախոյս քաջալերութեան առ ի նոյն, թէ միայն քաղցրալուր ունկնդրութեամբ մատուցիք զլսելիս:

Եթէ զբարւոք սկզբնաւորութիւն՝ կէս գործոյն համարեցան իմաստունքն, ապա և մերս առաջարկութեան սկիզբն գեղեցիկ՝ աջով Բարեխնամ Բարձրելոյն, և ի փառս միոյ աստուածապետութեանն և յօգուտ ազգիս, այժմէն աւետաւորէ ինձ և զմիւսոյ կիսոյն յառաջադիմութիւն ի կատարածն, թէ միայն մեծախոհ երկայնմտութեամբ մինչեւ ի սպառ կացցուք ի նմին: Բայց ընդ այս երկայնմտութիւնն արդ երկմտեացէ ի խոհական հարցդ՝ գտանեմ և ոչ զոք: Սկզբնաւորութեանն ընտրութիւն միայն էր վաղ ուրեմն ի մերում ազատութեան, բայց կամք յառաջատուութեանն յայսմհետէ ոչ եւս: Թուիմ յիս ինքն այլ իմն տեսանել այսօր հանդիսական նոր և տիեզերախումբ քան զմերն պատկառելի: «Տեսիլ եղար Աստուծոյ, հրեշտակաց, աշխարհի և մարդկան»: Ահա Բարձրեալն վերադիտող ի բարձանց, տուող պարգեւացս, յոր հառաչէաք անձկաւ ընդ այսչափ ամս: Ահա և երջանիկ Թարգմանչացն պարք, և ամենայն աստուածունսոյց վարդապետք ազգիս լուսաւորիչք, ակնկառոյց ի մեզ խնդակցին ընդ միմեանս ասելով. Տեսցուք յաշակերտեալսն մեր յետ մատենական հանդիսիցս և զգործոց մերոց զնմանողութիւն՝ ի հրահանգել զմանկունս անտերունչ ազգիս, յորմէ ոչ անխայեցաք զկարն, զքիրտն, զարտասուս, զհեծութիւն, հուսկ ուրեմն և զարիւն:

«Տեսիլ եղար Աստուծոյ, աշխարհի և մարդկան»: Հարաւ ահա փող, պարգեցան զրօքք, բաշխեցան նշանք յանուն Տեառն, կարգեցին զօրավարք զճակատն, զիմագրաւ եղեն նահատակքն, բաց է ասպարէզն, փախստեան չիք քարանձաւ կամ մրցանակ՝ կամ անջինջ ամօթ նախատանաց ազնուական ոգւոց քան զմահ

դժնդակ: Հանդիսատես ասպարիզիս նստի զիտնականն Եւրոպա. ազգ մեր զլիւծվին և աղքատ և այրի ծնողք մանկանցն առաքելոց կկոցեալ աչօք ի մեզ են պշուցեալք, որոց խլեալք իւրովի ի գրկաց ըզմանկունսն զոր սնուցին, ապապարեն ի խնամս ասպնջական ալեացն յերկեղէ տղայակոտոր տգիտութեանն, որպէս անդ ուրեմն ի հինսն ապիկար մանկիկն Մովսէս պրտուեայ տապանաւն յանձնեցաւ ալեացն Նեղոսի, զոր յաճել իւրում ի հասակին, սաստեաց ապա գաւազանաւն և կորգեաց զազգ իւր յանապատ և հրահանգեաց զնա օրէնսդրութեամբն և աստուածագիծ տախտակօք: Եհաս ահա հեռի յեզիպտական խոհերացն, տապանն ի խաղս Աղբիական խորշիցն, բերող ոչ միոյ մանկան, այլ երկոտասանից: Տեսանէ զնոսա հայրն մեր Աստուածապատիւ թէպէտեւ բազմածնունդ որդւովք բերկրեալ, խանդաղատի զնոքօք, և ոչինչ երկբայի յորդեգիրս զնոսա առնուլ, և յանձնել ի ստնտուս՝ ի վաւրիչս և ի դաստիարակս: Մնուցէք զնոսա ինձ, ասելով, մանաւանդ եթէ սնուցէք զնոսա ազգին, և եւս առաւել՝ սնուցէք զնոսա Ամենահօրն Աստուծոյ, և ես եղեց ձեզ վարձահատոյց օրհնութեամբս. տացէ և Բարձրեալն զիւր վարձս զոր նայն գիտէ: Ո՞վ որդեգրութիւն չնաշխարհիկ, ո՞ր դաստիարակութիւն աստուածահաճոյ քան զամենայն արարս պանծագոյն առ մեօք կարծեցեալս: Եթէ բանաւորագոյն վախճան ծննդագործութեանն է պաշտօնեայս աստուածածանօթս յարուցանել յերկրպագութիւն Արարչիս, և ժառանգանապատում բարեացն, զինչ քան զդաստիարակութիւն (որ երկրորդն է դասիւ ի հայրութեան և Տեառն ի պատուի,) կայցէ ինչ առաւել ցանկալի. եթէ զանհրահանգ բրտութիւն մարգել, եթէ զմտաց կուրուսթիւն լուսաւորել, եթէ զմեղաւորն յապաշխարութիւն ածել զործ է առաքելական պաշտամանս յանձն առելոյ ի մէնջ, և եթէ միոյն դարձ ծածկէ զբազմութիւն մեղաց, զինչ առասցուք ապա, Հարք, զանմեղ մանկտին մարգել ի պահպանութիւն

անմեղութեանն, զղիւրաթեքն զայն հասակ զոր սիրեաց և Փրկիչն սաստելով աշակերտացն, դաստիարակել յերկիր Տեառն, յընտիր քաղաքականութեան, ի գիտութեանց վարժս, և որ մեծն է, ի Քրիստոսատուր նոր պատուիրան ընկերսիրութեան, որով որոշի բանականն յանբանից, որով յօրինի կենցաղս աշխարհաշինութեամբ, որով որոշին աշակերտք Քրիստոսի, որով և անգործ դատարկասուն աղքատութիւնն գտանէ ուսմամբն հայթհայթանս չափաւոր կենաց, առ ի լնուլ երբեմն զաշխարհ ոչ անհրաժեշտ ծննդովք, որ բեռն են աշխարհի, զի մի ասացից և ժանտախտ մարդկութեան:

Գիտեմք քաջ, Աստուածապատիւ Հայրապետ, դաստիարակող նորոյ դպրանոցիս, դաստիարակութեան պաշտօն թէպէտեւ այսօրիւր մասամբք քեզ քաղցր ամենայնիւ և տենչալի, բայց և տաժանական վասն որ ի նմայն հոգաբարձութեանց ստանձնելոց ի վշտակիր քո թիկունս, մինչեւ աստուածայնոյն իսկ Մովսիսի հեզոյն քան զամենայն մարդ, յետ երկիցս և երկիցս հրաժարելոյն, և յետ լսելոյն զաստուածասաստ բարկութիւն, նստել երբեմն առաջի տապանակին գանգատել սիրողաբար առ ընտրողն իւր ասելով. «Միթէ ես յղացայ զամենայն ժողովուրդս զայս, կամ թէ ես ծնայ զսոսա, զի ասես ցիս, թէ ա՛ռ զսա ի գոգ քո, որպէս առնուցու դայեակ զստնդիաց, տանել յերկիրն զոր երդուար հարցն նոցա», երկիր որ բղխէ զկաթն ճշմարիտ աստուածապաշտութեան, երկիր որ բղխէ զմեղր անուշակ քաղաքականութեան, երկիր պարարտութեան ցորենոյ, զինւոյ և իւղոյ և ամենահամ պտղոց բանական գիտութեան: Արդարացեալ է գանգատդ և ոչ անհաճոյ Տեառն. լուր նմին իսկ Աստուծոյ, որ միւրթաբեացն զսիրելին վշտամբեր, առնուլ ի հոգւոյ նորին, և հեղուլ ի վերայ եօթանասնիցն ծերունեաց, զորս ետ նմին յօժանդակութիւն: Ո՛վ Հարք յարգոյապատիւք, արդարեւ դժուարին է, յոյժ դժուարին տեսչութեան պաշտօն, ո՞ ոչ զիտիցէ

միոյ եւեթ թիկանց անհանդուրժելի, ոյր սակս և իմաստութիւնն անբաւ փոխանակ նոր զօրութիւն յաւելլոյ յընտրեալն իւր ի Մովսէս առ ի բառաւոյ միայնակ զբեռն ծանր, յաւել նմին ընկերակիցս ի բեռնակցութիւն. զիշխանութիւնն պահեաց, այլ զբեռնն բաժանմամբն թեթեւացոյց: Դիւրանան վերակացութիւնք, ուր երկու զածութեամբ պահին օրէնսդրութիւնք, ուր յարգին հաւաստեաւ ընդ միմիամբք դասաւորութիւն և քաջ ներդաշնակութիւն: Չիք խառնակութիւն ի զինուորական բազմութեան՝ ուր տիրէ դասակարգութիւն, և ոչ անձանց բազմութիւն փաստէ ինչ՝ ուր գոյ սրտից միաբանութիւն ուղղեալ առ մի եւեթ նպատակ: Տեսանեմք աւագիկ ի մեքենական կազմածս ճարտարաբանաստ, ուր զի անուոց խուռն բազմութիւն տգիտաց թուի խոչ շարժմանն իսպիանարար, յորժամ իւրաքանչիւր կան միան ի շարի յոր եղանն, և մին ի միւսմէն ընկալեալ զհաղորդութիւն շարժմանն, վերջինն միայն ի յանիւսն ի զսպանակէն կամ ի ծանրիչ գնտոյն եւեթ առնու զմղումն և մղէ զայլսն: Տեսանեմք և ի շարժման ծանուց յայնժամ միայն երազէ շարժումն, յորժամ շրջիչ զօրութիւնքն ամենայն իցեն համաշունչք ի ձգել զշարժելին առ մի կէտ. իսկ ի ձգել միոյն ի հարաւ և միւսոյն ի հիւսիս դէմ ընդ դէմ կամ հաւասար զօրութեամբ և կամ առ ի շեղ միոյն ընդ արեւելս և միւսոյն ընդ արեւմուտս, յառաջնումն իսկապէս զաղարէ շարժումն և յերկրորդումն յապաղեալ անագանէ:

Ո՞չ զօրհանապազ սքանչանամք ի բազմափող երգիւն, ուր յոլովութիւն եղեգանցն ոչ պիտանի է միայն, այլ և հեշտալուր գործէ զհնչմունսն, կարեւոր է և բամբն և նուրբն և զիւն, սոսկն և թան, շունչ փրքոյն միօրինակ է յամենեսին, բայց և ոչ մին ի փողոց արձակէ ինքնին զձայն առանց շարժումնոյ ճարտար մատինն, ապա թէ ոչ փոխանակ ներդաշնակութեան՝ լինի խառնածայնութիւն լսելիաց տանջիչ: Իսկ ի քաղցր ներդաշնակութեան անհաւասար նուագարանիս, հա-

սարակ են փառք ամենայն եղեգանցն, և մեծի և փոքու և բամբին և սոսկին, որպէս և միոյն հնչիւն անժամ և ճոնչածայն, բոլորիցն ածէ ի վերայ զխանգարումն և անգործ դերեւանայ ճարտարութիւն երաժշտապետին:

Դաստիարակութիւն մանկտոյն թէ առ անհոգութեան չլինիցի յօգուտ դաստիարակելոցն, փնասարեք եղիցի ոչ դաստիարակողացն միայն, այլ և բովանդակ Միաբանութեանս՝ որ պատասխանատուն է Աստուծոյ և աշխարհի. «Տեսիլ եղաք Աստուծոյ, աշխարհի և մարդկան»։ ոչ բարեխոհացն միայն և բարեկամաց, զորոց առ դժբախտութեան սակաւս ունիմք առ մեօք, այլ և չարասէր հակառակորդաց, որոց ոչ մի խումբ, ոչ մի դաս, և ոչ մի տեսակ, որ ներքին և որ արտաքին, բայց միօրինակ ամենեքին ակնկառոյց առհասարակ, ոչ ի գովել և ոչ ի խրախոյս, այլ պատրաստք ի խափանել, և թէ չեղիցին այնմ զամագիւտ, սրատեսք են նոքա և շիւղադէտք ի ծաղր և ի քրքիջ և պատրաստք յոտնհարութիւն՝ թէ զլորիցիմք ինչ կարճատեւութեամբ:

Տեսանեմ ի հիւսիսոյ զակն վայրենահայեաց, կանխեալ քան զմեզ ի դաստիարակութիւն, երանի թէ ողջմտութեամբ քաւ յինէն խանդալ ընդ բարեբաւաստութիւն ազգիս, յաշողեալ ձեռնկալու սատարութեամբ զիս, յաշողեալ ձեռնկալու սատարութեամբ բազմաց. վասն զի չարակնութիւն ոչ հաղորդի ընդ իմաստութեան և ոչ ընդ քրիստոսական ոգւոյ, որ խնդայ ընդ փառաւորութիւն անուանն Աստուծոյ քարոզելոյ նաեւ առ հետաւորեան: Տեսանեմ ի Հնդկիս ճեմարանս կրկին՝ գեղեցիկ անուամբ շքեղազարդեալս, բայց նախանձ ընդդէմ ողջախոհացս: Տեսանեմ և այլ զպրոցս գանազանս ինքնակերտս ի հետեալսն և յողջամիտս, և ահա աչք առնեցուն ի մեզ յառեալք, և թեւակոխեն իսկ ելեւելս առնել զմեօք. թեւակոխեցեն՝ խրախոյս տամք. բայց և ոչ եմք փափաքող երկրաւոր փառաց, այլ ուրախ եմք յամենայնի, լցցի երկիր զիտութեամբ, թէ զիտացեն միայն վարել զայն յօգուտ:

Մեք, Հարք յարգոյապատիւք, զրաւեսցուք զփառս, լինել ամենեցուն յայսմհետէ կամ նախագաղափար, և կամ բարեկարգ յառաջագիմութեամբս ուղղիչք նոցա ի լաւագոյնն, և ահա ճշմարիտ փառք և ըստ Աստուծոյ անստգիւտ պարծանք Միւրթաբեան Միաբանութեանս: Զինչ խորհիցիմք յորժամ յետ ամաց ինչ ընդգրկեցեն ծնողք զդարձուր մանկունսն հաստատեալս ճշմարիտ և հաստատուն սկզբամբք աստուածապաշտութեան, և ճոխացեալս կարեւոր և չափաւոր ուսմամբ ի վճարել զպէտս իւրեանց և զծնողացն՝ արուեստիւք ինչ պիտանեօք, ո՛վ քանի՜ օրհնութիւնք յորքոց և յայրեաց հնչեցեն առ Աստուած աղաղակելով. Սոքա են զաւակք օրհնեալք տանն Միւրթարայ, մեք ծնաք զնոսա, այլ անկերպարանս՝ տալով նոցա մարմին և արիւն միայն, կերպարանիչք հոգւոց նոցա և երկրորդ հարքն և շնչատուքն են Միւրթարեանքն: Չորաբեկ հացին էաք կարօտք, և ահա Միւրթարեանքն ջամբեցին մեզ և զայն: Ո՛վ միւրթարութիւն հոգեխրախոյս, ո՛վ պարծանք պարծանաց մեծ քան զգիտնաւորութեանն առնուն՝ յոր մաշիմք և ծիրիմք զօրհանապազ, թէպէտեւ այն ի փառս Աստուծոյ: Ո՛վ պարծանք անզուգական, զոր լսեմք ի նմին իսկ յաստուածեղէն բերանոյն առ մարգարէն, եթէ՝ Հանցես զպատուականն յանարգէն, իբրեւ զբերան իմ եղիցիս: Բերան, որ յոչ գոյից ած ի լինելութիւն զհրաշակերտս զամենայն, որ յերկինս ի վեր և որ յերկիր ի խոնարհ:

Ո՛ տայր տկարութեանս կող հարստակող, և նրբաձայն շրթանցս ձայն պղնձի և բարբառ որոտագոչ հնչեցուցանել անդր քան զՊոլիս, քան զՏաւրոս, քան զԿովկաս և քան զԳանգէս լսելի առնել զձայն խրախուսանաց յընդհանուրս այսմ եւեթ դաստիարակութեան ուշ ունել ամենեցուն, առ ի հրահանգութիւն բարուցն ապականելոց, առ ի կրթութիւն առաջին իսկ պարտեաց մարդկութեան ապախտ եղելոյ. միով բանիւ, բառնալ յազգէս զանկրթութիւն, զաշխարհաւեր զժողովիւն, զոգի հակառակա-

սիրութեան, զանմիտ նախանձ, զհեղգա-
սիրտ ամբարհաւածութիւն, զթանձր տգի-
տութիւն՝ զհարազատ դատերս բազմա-
ծնունդ մօր չարի անուսումնութեան. ոչ
այնչափ ի բանական և ի մարդկային վարժ-
մունս, որչափ ի մարդս աստուածայնոյն
և բարոյականին. քանզի հնար է լինել
քաջագէտ ի մարդկայինս, և անուս յաս-
տուածայինսն, զորոց զյաճախ օրինակս
աւաղեմք ի մերումս դարու:

Բայց նորոյ այսմիկ երախտեաց եղե-
լոյ առ թորգոմեան ազն և նախասկիզբն
պատճառ: Ձիւրդ անյիշատակ թողից ի
հանդիսարանիս զանուն քո առ ինեւ մեծ
քան զաշխարհակալաց, ով մեծք Սամուէլ,
բարեացապարտ և ազգասէր: Խորհեցար
մեծամեծս, այլ նախանձեցաւ մահ՝ ցու-
ցանել քեզ առ կենդանեօք զկատարածն.
և ահա յետ ութեւտասն ամաց ել ի լրումն
փափաք սրտիդ գերեզմանարարառ կա-
կանմամբ: Հանգիր արդ ի մշտնջենագոչ
բողոքոյդ, հանգիր, հասին ահա խռնեցան
որդիացեալքն որբք և աղքատք, որ ա-
ռաւել ճոխացուցեն զտուն քո քան զդիւ-
րացնդի զանձս զոր թողերն, և անանց
պայազատութեամբ անմահացուցեն
զգարմ քո ազգաց յազգս, քան զնշխարս
ազգատոհմիդ, և տարեւոր յիշատակօք
բարձրացուցեն զքեզ որդիացեալքն:

Եւ քեզ խրախոյս, Արգոյապատիւ վա-
րիչ դպրատան, ժրաջան Գործակալ, Հայր
հոգեւոր և դաստիարակդ, յորոց ի ձեռս
ապսպարեաց Գպրատանս Նահապետ՝ Հայր
մեր աստուածապատիւ, զորբոցն դաստիա-
րակութիւն, ով աւանդապահ փառաց և
անուան Մխիթարեան Միաբանութեանս:
Աւանդ է սա սրբազան, աւանդ են և որբքն
ի հաւատարիմ ձեռս, կրթել զնոսա յեր-
կիւղ Տեառն, և յընկերսիրութեան անձա-
նօթ առաքինութիւն և յուսմունս պիտա-
նիս: Չեր են վաստակքն, ձեր և քրտունքն,
և եթէ քրտանցդ ոչ չափեսցին վարձք և
փառք առ ի մարդկանէ, մի՛ լքանիք. մեծ

են քրտունք սորա քան զփառս զառ ի նո-
ցանէ մատուցեալս, ամենառատ վարձա-
հատոյց եղիցի ինքն Սատուած, որ խոս-
տացաւն առ օրէնստուայց Դեւտացիս՝ Ես
եղէց ձեր վարձք և ձեր բաժին: Փառացդ
բաժանորդ եմք առ հասարակ, զի մի մար-
մին եմք ամենեքին, և աղօթիւք միշտ
ձեռնադրեալ:

Եւ արդ առ ձեզ են բանք իմ վերջին,
ով մատաղերամ պատանիք, ով դեռահաս
մանկունք, անուշակ ակնկալութիւնք բազ-
մավիշտ և բազմայոյս մօր ձերոյ Մխի-
թարեան ուխտիս. բնակեալք ի գաւիթս մե-
նաստանիս ընդ դաստիարակութեամբ փու-
թաջան դայեկացդ: Քաղցրասցի ձեզ այժ-
մէն կաթն ճշմարիտ անտուածապաշտու-
թեան և երկիւղի կարգի և հպատակու-
թեան Տեառն, և բարեշնորհ քաղաքակա-
նութեան և գիտութեան, զոր դիանայքդ
ի ստեանց նոցա: Չայս բարբառի առ ձեզ
Սատուածապատիւ Հայր մեր հասարակ
ընդ շունչ իմ: Գովեմ զջան ձեր յառա-
քինութեան և յուսման, բայց յաւելջիք
ի նոյն, զի և ձեզ լիցի յաւուր միում
փոխանակել զտեղի արգոյ Հարց ձերոց
ձերունեաց: Առ ի քաջ դաստիարակել
զայլս, հարկ է լինել և քաջ դաստիարա-
կեալ: Ամբարեաջիք ի միտս զսկզբունս
ուղիղ դատման, և ի սիրտ զսկզբունս հաս-
տատուն առաքինութեան: Վարժեալիք ի
կրթարանիդ, զի և դուք նահատակեալիք
երբեմն յայս նոր ասպարէզ աշխարհա-
խումբ, ժառանգել զօրհնութիւն Բարձրե-
ւոյն: Եւ զի պարգեւատրութիւն շնորհիս
հասարակաց է և մեզ և ձեզ, հասարա-
կաց լիցի և գոհութիւնն անլռելի, և ա-
ղերսն պաղատախառն ի յարակայ յա-
ջորդութիւն դպրատանն, օ՛ն առեալ ա-
ղաղակելով առ նա միաձայն բարբառով.
Փառաւորեալ է Տէր, աջ քո, պահեա՛ Տէր
զդաստակերտն, զոր տնկեաց աջ քո. ի
քէն է Տէր իմաստութիւն և զօրութիւն.
դու յոյս մեր և ապաւէն:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԼԱՄԱՐԹԻՒՆԻ

Մուրատեան Վարժարանի Բարիկի մէջ պաշտօնապէս բացման առթիւ

1848ի Սեպտեմբեր 24ին:

Յարգելի Ուսուցիչներ. Պատանի աշակերտներ

Այս վարժարանին մէջ իմ անունս յիշուելու, և այն պատիւը զոր ինծի ընել
հաճեցաք՝ վայելելու համար թէ որ իրաւունք մը ունիմ՝ միայն այն է՝ զոր Դուք ալ
հիմա յիշատակեցիք, այսինքն Արեւելի ճանապարհորդ եղած ըլլալս, և այնպիսի
ճանապարհորդ մը՝ որ անկից ետ դարձած ժամանակ միտքը տոգորուած է ոչ միայն
ճանապարհորդ և ձեր պատմութեան շքեղութեամբ, այլ նաեւ բարեսիրութեան և
ձեր երկիրներուն և ձեր պատմութեան շքեղութեամբ և առատօրէն Մի-
համակրանքի այնքան ապացոյցներով՝ զորս շարունակ ընդունած է ձեզի որ
ջերկրական ծովէն անդին եղող ձեր եղբայրներէն: Ի սրտէ շնորհակալ եմ ձեզի որ
ստիպեցիք զիս, ինչպէս որ քիչ առաջ կ'ըսէիք, ձգելու քաղաքականութեան այն
ծանր հոգեբը՝ որոնց մէջ ընկղմած է Յրանսա այս պահուս, ոչ թէ կարճամիտ և
ընդունայն անձնասիրութենէ շարժած, այլ դիտաւորութեամբ որ ալ աւելի խոր բանայ
ախօսը ուրիշ ժողովուրդներու և համօրէն մարդկային ցեղին՝ թէ որ Սատուած անոր
վերապահներ է այդ պարճանքը:

Արդարեւ ինծի պէս քաղաքական մարդու մը համար ամէնէն քաղցր հանգիստն
է և մտքի ամենամեծ զովութիւնը (եթէ կը ներէք ինձ այս բացատրութիւնը) տասնհինգ
տարի բացակայութենէ վերջ Բարիկի մէջ գտնել մէկ անկիւնը այն Արեւելքին՝ որուն
վրայ այնչափ իրաւամբ կ'պաճ են երեւակայութիւնս և սիրտս:

Նորէն կ'ըսեմ, շնորհակալ եմ ձեզի՝ որ մեր օրերու քաղաքական փոթորիկ-
ներուն մէջ դիմացս հանեցիք այս ովասիսը:

Արդէն ուրիշ անգամ բախտն ունեցեր եմ ուրիշ երկրի մէջ տեսնելու նոյնպիսի
շահագրգռութեամբ, նոյնօրինակ ամփոփութեամբ և նոյնպիսի գաղթականութիւն մը
Հայոց, այն Ս. Ղազարու կղզեակին մէջ՝ Վենետիկոյ մօտ, որուն ճամբան ցոյց տուած
էր ինծի, այսպէս ըսեմ, Լորտ Պայրըն՝ անգղիացի մեծ բանաստեղծը, և ուր ինքն
ալ յաճախ ամփոփեւ ու լուսաւորեւ է իր գեղեցիկ երեւակայութիւնը ձեր գրակա-
նութեան լոյսերով:

Այն կղզին, այսօր, մեզի պէս ականատես է քաղաքական վերածնունդի մը,
վենետիկեան ազգին վերածնութեան՝ որ պահ մը, երկար ատեն ճնշուած և թաղուած
էր, բայց իր արիասիրտ բարախոսները բաւական կը ցուցնեն որ նա կ'ուզէ և թէ
պէտք է որ վերստանայ իր առաջին տեղը կենդանի ազգերու երկրի վրայ:

Յրանսական Հանրապետութիւնը վենետիկէն վար պիտի չմնայ հիւրասիրութեամբ
ընդունելու այս հայ գաղթականութիւնը:

Յրանսական Հանրապետութիւնը պահեր է ձեզի հանդէպ համակրանքը, այն
միապետական Յրանսայի համակրանքը՝ որու մասին կը խօսէիք հիմա, այն Յրանսայի՝
որ պատուաւոր ասպնջականութիւն մը շնորհած է և նոյն իսկ գերեզման մը ձեր
թագաւորներու վերջին պայազատին:

Հանրապետութիւնը փոխեց Յրանսայի կերպարանքը, բայց չփոխեց անոր սիրտը.
ան երբեք պիտի չփոխէ իր զգացումները նկատմամբ այն արեւելեան ազգերուն՝ որոնց